Ինչո՞ւ Փրկիչը Եկեղեցի ունի:

1. Կարդացեք հետևյալ խոսքերը և ընդգծեք այն պատճառները, թե Փրկիչն ինչո՞ւ Եկեղեցի ունի:



Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցին ստեղծվել է, որպեսզի ուսուցանի Նրա վարդապետության ամբողջականությունը և ծառայի Իր քահանայության զորությամբ՝ կատարելով Աստծո արքայություն մտնելու համար անհրաժեշտ արարողությունները: Այն անդամները, որոնք հրաժարվում են Եկեղեցի հաճախելուց և ապավինում են միայն անհատական հոգևորությանը, հեռանում են ավետարանի այս կարևոր սկզբունքներից՝ քահանայության զորությունից և օրհնություններից, վերականգնված վարդապետության ամբողջականությունից և այդ վարդապետությունը կիրառելու շարժառիթներից ու հնարավորություններից: (Դալլին Հ. Օուքս «Եկեղեցու անհրաժեշտությունը», *Լիահոնա,* նոյեմբեր 2021, 25)

Ուրացությունից ու Եկեղեցու մասնատումից հետո, որը Նա կազմավորել էր, երբ երկրի վրա էր, Տերը մեկ անգամ ևս վերահաստատեց Հիսուս Քրիստոսի Եկեղեցին մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով: Հնագույն նպատակը մնում է Հիսուս Քրիստոսի ավետարանի բարի լուրի քարոզումը և փրկության արարողությունների սպասավորումը, այլ կերպ ասած՝ մարդկանց Քրիստոսի մոտ բերելը: Եվ հիմա, այս վերականգնված Եկեղեցու օգնությամբ փրկագնման խոստումը դրված է հասանելիության սահմաններում, նույնիսկ այն մահացածների հոգիների համար, որոնք մահկանացու կյանքում շատ քիչ գիտեին կամ ոչինչ չգիտեին Փրկչի շնորհի մասին: (Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Ինչո՞ւ Եկեղեցին», *Լիահոնա*, նոյեմբեր 2015 թ., 108)

Ձեր սովորածից գրեք հակիրճ ամփոփում այն մասին, թե Փրկիչը ինչու Եկեղեցի ունի երկրի վրա:

_____

_____

_____

_____

2. Մորմոնի Գիրքն առաջին անգամ լույս տեսավ Եկեղեցու կազմավորումից՝ 1830 թվականի ապրիլից կարճ ժամանակ առաջ: Վարդապետություն և Ուխտեր 20.9–36 հատվածներում Տերը շեշտել է շատ ճշմարտություններ, որոնք ուսուցանվում են Մորմոնի Գրքում:

Ուսումնասիրեք հատվածների հետևյալ խմբերը՝ փնտրելով կարևոր ճշմարտություններ, որոնք Փրկիչը ուսուցանել է Իր և Իր վարդապետության մասին: Կարող եք օգտագործել սուրբ գրությունների էջատակերի ծանոթագրությունները՝ կարևոր տեղեկություններ գտնելու համար:

Վարդապետություն և Ուխտեր 20.8–15 (Մորմոնի Գիրքը և նրա դերը Վերականգնման գործում)

Վարդապետություն և Ուխտեր 20.17–25 (Փրկության ծրագիրը)

Ընտրեք երկու կամ ավելի ճշմարտություն, որ դուք ուսումնասիրել եք: Գրեք, թե ձեր կարծիքով ինչու էր կարևոր, որ այս ճշմարտությունները շեշտվեին Եկեղեցու հիմնադրման ժամանակ:

© 2023 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_111-1